**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՏԻԳՐԱՆ ԱՐՄԱՆԻ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ**

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2023

---

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ТИГРАН АРМАНОВИЧ МУГНЕЦЯН**

# ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ ИЗБИРАТЕЛЬНОГО ИНСТИТУТА В ПРОЦЕССАХ ДЕМОКРАТИЗАЦИИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

**АВТОРЕФЕРАТ**

Ереван 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Մարգարով

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Ալեքսանյան
քաղաքական գիտությունների թեկնածու Ա. Մ. Ղազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2023 թ. փետրվարի 28-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0025, Ալեք Մանուկյան 1):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2023 թ. հունվարի 16-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

---

Тема диссертации утверждена в Академии государственного управления Республики Армения.

Научный руководитель: доктор политических наук, профессор А. А. Маркаров

Официальные оппоненты: доктор политических наук, профессор А. С. Алексанян
кандидат политических наук А.М. Казарян

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 28 февраля 2023г. в 13:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 16 января 2023г.
Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент В. С. Петросян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ընտրական ինստիտուտը առանցքային տեղ է զբաղեցնում ժողովրդավարական համակարգերում: Հիմնականում ընտրությունների միջոցով է իրացվում հանրային նախընտրությունների, կամքի արտահայտումն ու իրականացումը: Միևնույն ժամանակ, ընտրական համակարգերի ուսումնասիրությունը քաղաքագիտության, մասնավորապես համեմատական քաղաքագիտության առանցքային ուղղություններից է: Համեմատական քաղաքագիտության մեջ այն նպաստում է հավելյալ գիտելիքների և տեղեկության ագրեգացիային: Քանի որ ընտրությունները անցկացվում են պարբերաբար, ընտրական տվյալները մշտապես ենթակա են թարմացման: Ըստ դրա՝ մշտապես անհրաժեշտություն կա ստուգելու քաղաքագիտական տեսությունում առկա հիպոթեզերը ընտրական համակարգի մասին: Բացի դրանից, ընտրական ինստիտուտը ինստիտուցիոնալ միջավայրում մշտական փոխազդեցության մեջ է գտնվում սոցիալական, տնտեսական, քաղաքական այլ ինստիտուտների հետ և որոշակիորեն ազդում է այդ ինստիտուտների ձևավորման, զարգացման և գործունեության առանձնահատկությունների վրա: Մասնավորապես, զգալի է ընտրական համակարգի ազդեցությունը կուսակցական համակարգի, խորհրդարանի կառուցվածքի վրա: Ընտրական ինստիտուտը միջնորդավորված նաև ազդում է հանրային քաղաքականության մշակման և իրացման վրա: Հետևաբար, նաև անհրաժեշտություն կա ընտրական տվյալների մշտական թարմացմամբ ստուգելու ընտրական համակարգի ազդեցությունը այլ քաղաքական ինստիտուտների վրա:

Հետխորհրդային երկրներում ընտրական ինստիտուտը բավական երիտասարդ է: Անկախացած երկրները, չնայած զգալի նմանություններին, տարբեր ուղիներ ընտրեցին ինստիտուցիոնալ զարգացման, քաղաքական ռեժիմների սահմանման առումով: Այդ կերպ կարելի է առանձնացնել հետխորհրդային երկրների երեք խումբ: Մի խումբը արագ անցում կատարեց ժողովրդավարական ռեժիմին և, ըստ դրա, համապատասխանեցրեց ընտրական համակարգը ժողովրդավարության պահանջներին: Մյուս խումբն ընթացավ ավտորիտարիզմի ճանապարհով. այդ երկրներում ընտրությունները շարունակում էին չլինել մրցակցային, ազատ և արդար, հետևաբար չէին արտահայտում հանրության նախապատվություններն ու կամքը: Երրորդը միջանկյալ երկրների խումբն է, որտեղ ընտրությունները որոշակիորեն արտահայտում են հանրային կամքը, սակայն զուրկ չեն թերություններից ու խնդիրներից: Երկրների անկախացումն ու ընտրական համակարգերի ներդրումը քաղաքագիտության համար տվյալների և ուսումնասիրությունների, ընդհանուր թեզերը այս քաղաքական տարածության համար փորձարկելու, առանձնահատկություններն ու ընդհանրություններն ուրվագծելու նոր հորիզոն բացեց: Հետխորհրդային տարածությունում ընտրական համակարգերի ուսումնասիրությունը հատկապես արդիական է, քանզի այն հարաբերականորեն նոր է, բավական հաճախ

ենթարկվում է փոփոխությունների և շատ հարմար է համեմատական վերլուծություն իրականացնելու առումով՝ հաշվի առնելով այդ երկրների ինստիտուցիոնալ ընդհանուր անցյալը: Հետխորհրդային անցումային ռեժիմների ուսումնասիրությունն առանձնանում է իր առավել արդիական լինելով, քանզի, եթե հետխորհրդային ավտորիտար երկրներում ընտրական համակարգը պատշաճ չի իրականացնում իր գործառույթները, իսկ ժողովրդավար երկրներում ընտրական համակարգը կայացած է և դրսևորում է իրեն այնպես, ինչպես մնացած կայացած ժողովրդավարություններում, ապա անցումային ռեժիմներում ընտրական համակարգը շարունակում է պահպանել իր փոփոխական բնույթն ու առանձնահատկությունները: Ընտրական համակարգի այդ առանձնահատկություններն արտահայտվում են թե համեմատ ոչ անցումային ռեժիմների, թե բուն անցումային ռեժիմներում՝ երկրից երկիր:

Ընտրական համակարգերի համեմատության թեման նաև արդիական է հնարավոր բազմազան մեթոդներով ուսումնասիրության առումով: Թեմայի արդիականությանը նպաստում են նաև ոլորտում իրականացվող հանրային քաղաքականության ու կարգավորումների մշակումն ու իրականացումը: Այդ պատճառով ընտրական համակարգերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոլորտի մշակվող քաղաքականությունը դարձնելու առավել փաստահեն, ինչը և արտահայտվում է սույն ուսումնասիրության արդիականության և արժեքի մեջ: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ընտրական համակարգերը մշտապես թարմացվող և, հետևաբար, մշտապես արդիական ուսումնասիրման թեմա են:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է համեմատել հետխորհրդային ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրների ընտրական համակարգերը և դրանց ազդեցությունը այլ քաղաքական ինստիտուտների վրա, ընդգծել նրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Այդ նպատակն իրագործելու համար սահմանվում են հետևյալ հետազոտական խնդիրները.

**Խնդիր 1.** Սահմանել ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրների շրջանակի որոշման չափանիշները: Հիմնվելով այդ չափանիշների վրա՝ առանձնացնել այդ երկրները: Ներկայացնել ընտրված երկրների քաղաքական ռեժիմների ընդհանրական առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը ընտրական համակարգի վրա: Ցույց տալ ընտրական համակարգի տեղը հետխորհրդային ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրներում:

**Խնդիր 2.** Մանրամասնորեն նկարագրել ընտրված երկրների ընտրական համակարգերը: Վեր հանել այդ երկրների ընտրական համակարգի ձևավորման առանձնահատկությունները, զարգացման դինամիկան և օրինաչափությունները: Առանձին դիտարկել ընտրական համակարգի բաղադրիչները, դրանց փոփոխության շարժառիթներն ու օրինաչափությունները, ինչպես նաև արդյունքները: Հաշվարկել և ցույց տալ ընտրական համակարգերում փոփոխությունների ազդեցությունը այլ քաղաքական ինստիտուտների,

մասնավորապես կուսակցական համակարգի վրա: Ներկայացնել մեկ առանձին ուսումնասիրվող երկրի համատեքստում տարբեր ընտրական համակարգերի կիրառման ինստիտուցիոնալ համատեքստը, անցկացվող ընտրությունների ընդհանուր որակն ու այլ հարակից տվյալներ, ընտրական համակարգի ընտրության հիմնավորումն ու կիրառման հետևանքները: Քննարկել կառավարման ձևի ազդեցությունը ընտրական համակարգի վրա, ինչպես նաև ընտրական համակարգի ազդեցությունը կառավարման, քաղաքական սուբյեկտների փոխհարաբերությունների, օրենսդիր մարմնում դաշինքների ձևավորման վրա:

**Խնդիր 3.** Վեր հանելով առանձին երկրների ընտրական համակարգերին բնորոշ հատկանիշները՝ համեմատական անցկացնել երկրների ընտրական համակարգերի միջև: Ուրվագծել ընտրական համակարգերի զարգացման դինամիկայի, նախընտրած ընտրական համակարգի կառուցվածքի ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Քննարկել ընտրական համակարգերի ազդեցության հետևանքների ընդհանրություններն ու տարբերությունները՝ կախված ինստիտուցիոնալ միջավայրից և այլ փոփոխականներից, ինչպես նաև գնահատել ընտրական ազդեցության արդյունքները քաղաքական համակարգի կայունության, զարգացման և ժողովրդավարացման տեսանկյունից:

**Հիմնախնդրի գիտական մշակվածությունը:** Ինչպես արդեն նշվել է, ընտրական համակարգի ուսումնասիրությունը համեմատական քաղաքագիտության կարևոր ուղղություններից է: Սակայն ընտրության ինստիտուտի ուսումնասիրման հանդեպ հետաքրքրությունը առավել լայն է: Քաղաքական տեսության և, մասնավորապես, ժողովրդավարության տեսության շրջանակներում ժողովրդավարական ռեժիմները բնորոշելիս ուսումնասիրվում է ընտրությունների դերը: Դիտարկվում է ընտրական ինստիտուտը՝ որպես ժողովրդավարության էական հատկանիշ: Այդ առումով ժողովրդավարության տեսությունում առկա են բազմաթիվ մոտեցումներ: Որոշ մոտեցումներ ժողովրդավարությունը բնորոշելիս բավարարվում են բացառապես ընտրությունների առկայությամբ: Այդ մոտեցումները, որոնք ընդունված է համարել մինիմալիստական, ժողովրդավարությունը դիտարկում են ընտրական գործընթացի առկայության պրիզմայով (Schumpeter, 2013; Przeworski, 1991; Alvarez et al., 1996; Huntington, 1991a): Այլ մոտեցմամբ, ընտրությունները դիտարկվում են որպես կարևոր բաղադրիչ ժողովրդավարության բնորոշման համար, սակայն, ընտրություններին զուգահեռ, կարևորվում են նաև քաղաքական իրավունքներն ու քաղաքացիական ազատությունները: Բացի դրանից, այդ մոտեցման շրջանակներում կարևորվում է նաև ընտրությունների որակը: Այս մոտեցումն ընկած է լիբերալ ժողովրդավարության պատկերացումների հիմքում (Dahl, 1956; Dahl, 1971; Karl, 1990, Dahl, 1998; Schmitter & Karl, 1991): Երրորդ՝ հիմնական մոտեցումը, չնայած այն հանգամանքին, որ ընտրությունները կարևոր է համարում ժողովրդավարական համակարգի համար, ընդգծում է դրա ոչ բավարար պայման լինելը քաղաքական ռեժիմը բնորոշելիս: Ըստ այս մոտեցման՝

ընտրությունները դիտարկվում են որպես հանրային կամքի արտահայտման ձև (Pateman, 1970; Habermas, 1987; Elster, 1998):

Ընտրությունները տեսական շրջանակներում նաև դիտարկվում են ռեժիմների փոփոխության դինամիկայի համատեքստում: Ռեժիմների փոփոխության մոտեցումները նույնպես պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի: Առաջին՝ մոդեռնիստական մոտեցումը ընտրությունները դիտարկում է որպես ստրուկտուրալ՝ սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական փոփոխությունների ածանցյալ: Համաձայն այդ մոտեցման՝ ստրուկտուրալ փոփոխությունները հանգեցնում են ռեժիմների փոփոխության, որն իր ազդեցությունն է ունենում ընտրական վարքագծի, արժեքների ու նախապատվությունների վրա (Lipset, 1959; Moore, 1993): Երկրորդ մոտեցումը, որը նույնպես կարևորում է ստրուկտուրալ պայմանները, ընտրությունները դիտարկում է որպես սոցիալական դասակարգերի՝ իշխողների և ենթակաների հարաբերությունների արդյունք: Ինչպես նաև ընդգծվում է ընտրությունների առանցքային նշանակությունը հանրային քաղաքականության որոշման համար (Boix, 2003; Acemoglu & Robinson, 2006): Երրորդ մոտեցմամբ, ընտրություններին շատ ավելի ընդարձակ ու բազմազան դեր է հատկացվում ռեժիմների անցման համատեքստում: Այս մոտեցման շրջանակներում դիտարկվում են ընտրական ինստիտուտի բնույթն ու գործառույթները՝ ըստ քաղաքական ռեժիմների առանձնահատկությունների: Բացի դրանից, դիտարկվում է ընտրությունների որակը ռեժիմների փոփոխման դինամիկայում և պատճառահետևանքային տեսանկյունից (Rustow, 1970; Linz & Stepan, 1978; O'Donnell, Schmitter & Whitehead, 1986; Diamond, 1996; Linz & Stepan, 1996):

Վերջին ներկայացված տեսական մոտեցման շրջանակներում նաև դիտարկվում են ընտրությունները հետխորհրդային տարածությունում: Դիտարկվում են ընտրությունների առանձնահատկությունները հետխորհրդային երկրների ժողովրդավարական անցման պայմաններում, ինչպես նաև այն ինստիտուցիոնալ միջավայրը, որում տեղի են ունենում վերոնշյալ գործընթացները: Հիմնավորապես ընդգծվում են հետխորհրդային տարածությունում ժողովրդավարացման առանձնահատկությունները և, ըստ այդմ, ընտրությունների որակը, ընտրական գործընթացների և համակարգի ազդեցությունը ժողովրդավարացման վրա (Roeder, 1994; Diamond, 1996; Гельман, 2001; Carothers, 2002; McFaul, 2002; McFaul, 2004; Hale, 2005a, Թորոսյան, 2006; Թորոսյան & Սուքիասյան, 2014):

Բուն ընտրական համակարգի ուսումնասիրությունները բավական շատ ու բազմաբովանդակ են: Ընտրական համակարգի և դրա այլ քաղաքական ինստիտուտների վրա ազդեցության համապարփակ ուսումնասիրություններ ներկայացրել են մի շարք հեղինակներ (Duverger, 1954; Rae, 1967; Riker, 1982; Blais, 1988; Lijphart, 1994; Cox, 1997; Katz, 1997; Norris, 2004; Herron, Pekkanen & Shugart, 2018): Ժամանակի ընթացքում այդ հետազոտությունները հարստացել են քանակական առավել ճշգրիտ մոդելներով: Այսպես հնարավոր է դարձել

ընտրական համակարգի հիման վրա դուրս բերել մի շարք ցուցանիշներ՝ պայմանավորված՝

- կուսակցությունների արդյունավետ թվով (Laakso & Taagepera, 1979; Taagepera & Shugart, 1989; Neto & Cox, 2007; Dunleavy & Boucek, 2003; Golosov, 2010; Shugart & Taagepera, 2017),
- անհամամասնականության ցուցանիշով (Lijphart, 1994; Gallagher & Mitchell, 2005; Herron, Pekkanen & Shugart, 2018),
- ընտրական համակարգի փոփոխականությամբ և կուսակցական կայունությամբ՝ (Pedersen, 1979; Pedersen, 1983; Bartolini & Mair, 1990; Birch, 2003; Mainwaring & Zoco 2007):

Հետխորհրդային տարածությունում ևս կարելի է գտնել ընտրական համակարգերի վերոնշյալ մասնակի կոմպոնենտների, առանձին երկրների ընտրական համակարգերի կամ ընտրական համակարգի վերաբերյալ ընդհանրական ուսումնասիրություններ (Pammett & DeBardeleben, 1996; Rose, Munro & Mackie, 1998; Moser, 1999; Birch, 2000; Herron, 2002; Shvetsova, 2002; Duch & Palmer, 2002; Birch, 2003; Nodia & Scholtbach, 2006; Meleshevich, 2007; D'Anieri, 2007): Սակայն պետք է նշել, որ գրականությունում զգալի բաց կա հետխորհրդային առանձին երկրների ընտրական համակարգերի ուսումնասիրման առումով: Հետխորհրդային երկրների ընտրական համակարգերի ուսումնասիրություններում հեղինակները հիմնականում կենտրոնացել են Ռուսաստանի և Ուկրաինայի դեպքերի վրա, մյուս երկրները պակաս ուսումնասիրված են կամ ընդհանրապես ուսումնասիրված չեն: Զգալի բաց կա նաև հետխորհրդային անցումային ռեժիմների ընտրական համակարգերի վերաբերյալ արդիական հետազոտությունների դաշտում. Խոսքը վերաբերում է թե՛ առանձին երկրներին, թե՛ համեմատական ուսումնասիրություններին:: Հետխորհրդային բոլոր երկրների ընտրական համակարգերի ամբողջական ուսումնասիրություն ներկայացրել է Բիրչը (Birch, 2003): Սակայն նրա կարևոր աշխատությունից անցել է մոտ 20 տարի, և տվյալների, հետազոտությունների թարմացման անհրաժեշտություն կա: Այս աշխատանքն ուղղված է գոնե մասամբ լրացնելու այդ բացը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ժողովրդավարացման պայմաններում ընտրությունների կայացման առանձնահատկություններն են: Հետազոտության առարկան ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող հետխորհրդային երկրների ընտրական համակարգերն են: Դա իրենից ենթադրում է առանձին երկրների ընտրական համակարգի բաղկացուցիչների (ընտրական անցողիկ շեմ, խորհրդարանի չափ, ընտրատարածքի մեծություն ու ընտրական բանաձև) հետազոտություն, ինչպես նաև այդ բաղադրիչների և ընդհանուր ընտրական համակարգի ազդեցության գնահատում և, ըստ այդմ, երկրների միջև համեմատականների կառուցում:

**Ատենախոսության տեսամեթոդական հիմքը:** Աշխատանքում հավասարապես օգտագործվում են որակական և քանակական մեթոդներ: Որակական մեթոդներից աշխատանքը մեծապես օգտագործում է

նկարագրողական, համեմատական, պատմական մեթոդները: Առանձին երկրների ընտրական համակարգերի հետազոտության համար աշխատանքում կիրառվում է դեպքերի ուսումնասիրության մեթոդը (case study): Ընտրական համակարգին առնչվող փաստաթղթերը, կարգավորումներն ու զեկույցները հետազոտելիս օգտագործվում է կոնտենտ վերլուծության մեթոդը: Ընտրական գործընթացների, ընտրական համակարգի փոփոխությունների մոտիվների, ընտրական համակարգը շրջապատող քաղաքական իրադարձությունների հետազոտության համար այս ուսումնասիրության շրջանակներում օգտագործվել են դիսկուրս և իրադարձային վերլուծության մեթոդները:

Ընդհանուր ընտրություններն ու ընտրական համակարգը դիտարկվում են նեոինստիտուցիոնալ հարացույցի շրջանակներում,քաղաքական ակտորների, ինստիտուտների գործունեությունը՝ ռացիոնալ ընտրության մոտեցման, համաձայն որի՝ քաղաքական միավորները, այդ թվում՝ ինստիտուտները, ձգտում են սեփական գործողությունների արդյունքի մաքսիմիզացիայի: Բացի դրանից, քաղաքական միավորների գործունեությունը դիտարկվում է նաև խաղերի տեսության պրիզմայով:

Ընտրական տվյալների մշակման, դրանցից թվային ցուցանիշներ դուրս բերելու և դրանցով էմպիրիկ հետազոտություններ կատարելու նպատակով աշխատանքում օգտագործվում են քանակական մեթոդներ: Ընտրական տվյալներից ընտրական համակարգին վերաբերող ցուցանիշների՝ կուսակցությունների արդյունավետ թվի և անհամամասնականության ցուցանիշի դուրսբերման համար օգտագործվում են քանակական մաթեմատիկական մոդելներ, որոնց համապատասխան բանաձևերը ներկայացված են աշխատանքում: Հետազոտությունում տվյալների հետ աշխատանքի համար նաև լայնորեն կիրառվում է նկարագրողական վիճակագրության մեթոդը:

**Ատենախոսության գիտական նորույթը**: Ատենախոսությունը ներկայացնում է ընտրական համակարգի դերը ժողովրդավարության ընկալումներում և ժողովրդավարական անցման պայմաններում: Աշխատանքում նաև ներկայացվում են հետխորհրդային անցումային երկրների ընտրական համակարգերի ձևավորման և զարգացման դինամիկան ու առանձնահատկությունները: Աշխատանքում ընտրական տվյալների ամբողջական օգտագործմամբ վերլուծության են ենթարկվում հետխորհրդային անցումային երկրների ընտրական համակարգերը: Գնահատվում է այդ երկրների ընտրական համակարգերի ազդեցությունը այլ քաղաքական ինստիտուտների, մասնավորապես կուսակցությունների վրա, հաշվարկվում է ընտրական համակարգից կախված կուսակցությունների արդյունավետ թիվն ու անհամամասնականության ցուցանիշը: Այդ առումով ատենախոսությունը իր ներդրումը կունենա չորս երկրների ընտրական համակարգերի տվյալների հարստացման հարցում: Ընտրված երկրների, ժամանակահատվածի և ընտրական ամբողջական տվյալների կիրառությամբ էմպիրիկ որակական և քանակական վերլուծությունն ապահովում է ատենախոսության գիտական նորույթը:

Աշխատանքի հաջորդ առանցքային նորույթը ընտրված հետխորհրդային անցումային երկրների ընտրական համակարգերի համեմատական վերլուծությունն է: Ատենախոսությունում ուրվագծվում են այդ երկրներին հատուկ ընտրական համակարգերի բնորոշ գծերը, զարգացման դինամիկան և առանձնահատկությունները: Հետխորհրդային անցումային երկրների ընտրական համակարգերը և փոփոխությունները դիտարկվում են կառավարման ձևի, քաղաքական գործընթացների համատեքստում: Աշխատանքն արժեքավոր է նրանով, որ քանակական փորձարկման է ենթարկում հետխորհրդային երկրների ընտրական համակարգի վերաբերյալ գրականության մեջ առկա պատկերացումները և դուրս է բերում այդ պատկերացումների համապատասխանությունը ներկա ընտրական ու քաղաքական տվյալներին և իրողություններին:

**Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը:** Ներկայացնենք ատենախոսության գիտատեսական նշանակությունը: Ատենախոսությունը փորձարկում է հետխորհրդային ընտրական համակարգին վերաբերող թեզերն ու պատկերացումները գրականության մեջ առկա տվյալների վերլուծության միջոցով: Այնուհետև ներկայացնում է, թե այդ թեզերից որոնք են շարունակում մնալ կենսունակ, և որոնք այլևս չեն բնորոշում հետխորհրդային ընտրական համակարգերը: Մյուս հանգամանքը, որը նպաստում է ատենախոսության գիտատեսական նշանակությանը, հետխորհրդային ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրների ընտրական համակարգերի համեմատական վերլուծությունն է: Համեմատական վերլուծության միջոցով ձևավորվում է հետխորհրդային անցումային ռեժիմների ընտրական համակարգերի ընդհանուր պատկերը, ինչպես նաև բացահայտվում են նրանց միջև տարբերություններն ապահովող հատկանիշները:

Կիրառական նշանակության առումով ատենախոսությունը ներկայացնում է ամբողջական ընտրական տվյալների վերլուծություն, ընտրական համակարգերի փոփոխության դինամիկա, ընտրական համակարգերին վերաբերող նոր ցուցանիշների դուրսբերում: Այդ տվյալներն ու աշխատանքում առաջ քաշված եզրակացությունները կարող են ծառայել ընտրական ոլորտի քաղաքականության, կարգավորումների, ռազմավարությունների մշակման և իմպլեմենտացիայի համար: Բացի այդ, ատենախոսությունում ներկայացված վերլուծությունը կարող է նպաստել ընտրական և կուսակցական համակարգերի քաղաքականության մշակման ու կիրառման գործընթացը առավել փաստահեն դարձնելուն: Աշխատանքը, դրանում կատարված հետազոտությունների շնորհիվ, կարող է օգտագործվել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում և մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներում՝ որպես ընտրական համակարգերը ներկայացնող պայմանական ձեռնարկ:

***Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:*** Հետազոտության ընթացիկ արդյունքներն ու դրույթները քննարկվել են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում և

ամբիոնի կողմից երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են 6 գիտական հրապարակումներում:

**Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության մեջ օգտագործվել է 323 աղբյուր: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը 190 էջ է:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունը հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում հետազոտության նպատակն ու խնդիրները, ցույց տալիս թեմայի գիտական մշակվածությունը, առանձնացնում ու նկարագրում հետազոտության օբյեկտը և առարկան, տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը վերնագրված է **«Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը»**: Առաջին գլխում ներկայացնում է ընտրությունների դերը ժողովրդավարության ընկալումներում, ժողովրդավարացման անցման պայմաններում և մանրամասնորեն քննարկվում է ընտրական համակարգը, դրա բաղադրիչներն ու ազդեցության հետևանքները քաղաքական ինստիտուտների վրա:

Գլխի առաջին՝ **«Ընտրությունների տեղը ժողովրդավարության տեսամեթոդական ընկալումներում»** ենթագլխում ներկայացվում է ըստ ժողովրդավարության տարբեր տեսամեթոդական մոտեցումների ընտրությունների տեղն ու դերը: Քննարկվում են ժողովրդավարության երեք հիմնական մոտեցումները: Ենթագլուխն ամփոփվում է, այն եզրահանգմամբ, որ անկախ ժողովրդավարության տեսական մոտեցումից ընտրությունները ընդունվում են, որպես բաղկացուցիչ մաս: Ժողովրդավարության հատկանիշների ավելացմանը զուգահեռ, նվազում է ընտրական ինստիտուտի դերը ժողովրդավարությունը բնորոշելու հարցում:

Երկրորդ՝ **«Ընտրությունների դերը ռեժիմների փոփոխության տեսամեթոդական ընկալումներում»** ենթագլխում ներկայացվել է գրականությունում առկա քաղաքական ռեժիմների վերաբերյալ պատկերացումները, ինչպես նաև ռեժիմների փոփոխության պայմաններն ու առանձահատկությունները: Վերոնշյալի շրջանակներում այս ենթագլխում ներկայացվում է ընտրությունների դերը: Քննարկվում է ընտրությունների դերը ժողովրդավարացման երեք հիմնական ուղղությունների շրջանակներում: Ենթագլխում նաև ըստ ուղղությունների ներկայացվում է հետխորհրդային տարածությունում ժողովրդավարացման գործընթացներում ընտրությունների դերը:

Երրորդ՝ **«Ընտրական համակարգի տիպաբանությունը, կառուցվածքը և հետսովետական տարածությունում ազդեցության**

**առանձնահատկությունները»** ենթագլխում համապարփակ ուսումնասիրվում է ընտրական համակարգը, դրա առաջնային և երկրորդական բաղադրիչները՝ ընտրական բանաձևը, ընտրատարածքի մեծությունը, խորհրդարանի չափն ու անցողիկ շեմը և քվեաթերթիկի կառուցվածքը, դիսպրոպորցիոնալությունը՝ ձայների և տեղերի անհամապատասխանությունը, պառլամենտական և նախագահական համակարգերում օրենսդիր մարմնի ընտրությունների առանձնահատկությունը և կապված ցուցակներ ունենալու հնարավորությունը: Ներկայացվում է բաղադրիչների և ամբողջական ընտրական համակարգի ազդեցությունը կուսակցական համակարգի և խորհրդարանի վրա: Բացի այդ ենթագլխում քննարկվում են ընտրական համակարգից՝ մասնավորապես ընտրական առաջնային բաղադրիչներից բխող անհամամասնականության, կուսակցությունների արդյունավետ թվի և փոփոխականության ցուցանիշները, հաշվարկման տարբեր մոտեցումները, թերություններն ու առավելությունները: Ներկայացվում է ընտրական համակարգի և այդ ցուցանիշները առանձահատկությունները հետսովետական տարածությունում:

Երկրորդ՝ **«Հետսովետական ժողովրդավարացվող երկրներում ընտրական համակարգի համեմատական վերլուծություն»** ներկայացված է հետազոտական աշխատանքի ընդհանուր շրջանակը, վերլուծվում են հետխորհրդային չորս երկրների՝ Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի ընտրական գործընթացներն ու համակարգերը: Հիմնվելով ընտրական տվյալների վրա հաշվարկվում է վերոնշյալ երկրների կուսակցությունների արդյունավետ թվի և անհամամասնականության ցուցանիշները: Ինչպես նաև համեմատական է անցկացվում առանձին երկների ընտրական համակարգերի միջև, ուրվագծվում են ընդհանրություններն ու առաձնահատկությունները:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում **«Հետազոտության կոնցեպտուալ շրջանակը»** վերնագրով, սահմանվում են հետազոտվող երկրների ընտրության սկզբունքները, համաձայն այդ սկբունքների հետազոտվող երկրների շրջանակը, հետազոտական աշխատանքային կանոնները և ուրվագծվում ընդհանուր կոնտեքստը որում այդ ընտրական համակարգերը գործում են:

Երկրորդ՝ **«Հայաստանի ընտրական համակարգն ու նրա ազդեցության հետևանքները քաղաքական ինստիտուտների վրա»** ենթագլխում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի ձևավորումը, զարգացման դինամիկան և առանձնահատկությունները: Ամեն ընտրության համար առանձին դիտարկվում է ընտրական համակարգի բաղադրիչներն ու նրանց կառուցվածքը: Ներկայացվում են ընտրությունների որակը, քաղաքական գործընթացները, որոնք նախորդել և հաջորդել են ընտրություններին և ընտրական համակարգի փոփոխություններին: Ութ խորհրդարանական ընտրությունների տվյալների վերլուծության արդյունքում դուրս են բերվում ամեն ընտրության համար առանձին անհամամասնականության և խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշները: Ընտրական գործընթացների և ընտրական համակարգի տվյալների վերլուծության հիման

վրա ընդգծվում է դեպի համամասնական ընտրական համակարգ փոփոխության օրինաչափությունը Հայաստանի քաղաքական զարգացումներում:

Երրորդ՝ **«Ուկրաինայի ընտրական համակարգն ու նրա ազդեցության հետևանքները քաղաքական ինստիտուտների վրա»** ենթագլխում նույն որակական ու քանակական մեթոդների կիրառմամբ ուսումնասիրվում և ներկայացվում է Ուկրաինայի ընտրական համակարգի ձևավորումը, զարգացման դինամիկան և առանձնահատկությունները: Հետազոտվում է ամեն ընտրության համար առանձին ընտրական համակարգի բաղադրիչներն ու նրանց կառուցվածքը: Հիմնվելով ընտրական տվյալների վերլուծության վրա ենթագլխում ընդգծվում է Ուկրաինայի ընտրական համակարգի փոփոխական բնույթը: Ենթագլխում նշվում է, որ որոշակի ընտրական ցիկլերից հետո Ուկրաինայում ընտրողների մոտ ուրվագծվում է ռազմավարական քվեարկության արտահայտումներ:

Չորրորդ ենթագլուխը վերնագրված է **«Վրաստանի ընտրական համակարգն ու նրա ազդեցության հետևանքները քաղաքական ինստիտուտների վրա»**: Այս ենթագլխում ևս, ինչպես նախորդներում կիրառվում է նույն մեթոդաբանությունը Վրաստանի ընտրական համակարգի ձևավորումը, զարգացման դինամիկան և առանձնահատկությունները հետազոտելու նպատակով: Ամեն ընտրության համար առանձին դիտարկվում է ընտրական համակարգի բաղադրիչներն ու նրանց կառուցվածքը: Ներկայացվում են ընտրությունների որակը, քաղաքական գործընթացները, որոնք նախորդել և հաջորդել են ընտրություններին և ընտրական համակարգի փոփոխություններին: Ենթագլխում վերլուծվում են Վրաստանում կայացած իննը խորհրդարանական ընտրությունների տվյալները, որի արդյունքում դուրս են բերվում ամեն ընտրության համար առանձին անհամամասնականության և խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշներըշ:

Երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ վերնագրված **«Մոլդովայի ընտրական համակարգն ու նրա ազդեցության հետևանքները քաղաքական ինստիտուտների վրա»**, նույն մեթոդաբանության հետևողական կիրառման միջոցով հետազոտվում է Մոլդովայի ընտրական համակարգի ձևավորումը, զարգացման դինամիկան և առանձնահատկությունները: Ամեն ընտրության համար առանձին դիտարկվում է ընտրական համակարգի բաղադրիչներն ու նրանց կառուցվածքը: Ներկայացվում են ընտրությունների որակը, քաղաքական գործընթացները, որոնք նախորդել և հաջորդել են ընտրություններին և ընտրական համակարգի փոփոխություններին: Տաս խորհրդարանական ընտրությունների տվյալների վերլուծության արդյունքում դուրս են բերվում ամեն ընտրության համար առանձին անհամամասնականության և խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշները: Ենթագլխում նշվում է, որ Մոլդովայի ընտրական համակարգը ի տարբերություն ուսումնասիրվող մնացած երկների առանձնանում է հարաբերական կայունությամբ և քիչ փոփոխությունների ենթարկված լինելով:

Վեցերորդ ենթագլխում՝ վերնագրված **«Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի ընտրական համակարգերի համեմատական վերլուծություն»** համեմատական վերլուծության են ենթարկվում հետսովետական անցումային երկրների ընտրական համակարգերը, նրանց փոփոխությունների օրինաչափությունը: Ենթագլխում համեմատվում են ընտրական համակարգերի ազդեցությունը, անհամամասնականության և խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ ցուցանիշները առանձին երկրների համար: Ամեն երկրի համար հաշվարկվում է ընտրական համակարգի բաղադրիչների, ընտրությունների մասնակիցների միջին թվաբանական ցուցանիշն ու ստանդարտից շեղումը, ինչն էլ ընկնում է համեմատական վերլուծության հիմքում: Քննարկվում են չորս երկրների ընտրական համակարգերի նախընտրությունների հիմքում ընկած դրդապատճառները: Ներկայացվում են ընդհանրություններ և առանձնահատկություններ ընտրական համակարգերի ու կառավարման ձևի, երկրներում կապված ընտրական համակարգի հետ տարանջատումների վերաբերյալ:

**Եզրակացություններ** բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել ստորև բերվածները՝

**Ընդհանուր տեսական մասով՝**

- Գրականության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընտրական ինստիտուտը հանդիսանում է ժողովրդավարության կարևոր հատկանիշներից: Ինչքան ընդարձակվում է ժողովրդավարության մեկնաբանմանը հատկանիշները, այդքան ընտրությունների դերը ժողովրդավարության բնորոշման մեջ նվազում է:
- Ընտրությունների միջոցով ժողովրդավարության սահմանումը նպատակ ունի դյուրացնել ժողովրդավարության օպերացիոնալիզացիան և ըստ այդմ դյուրացնել ժողովրդավարության չափումները: Ըստ այդմ, որքան շատ են ժողովրդավարության սահմանման մեջ հատկանիշները, այդքան խրթին է ժողովրդավարության չափումը:
- Չափելիության դյուրացման և հետազոտական պարզության նպատակով քաղաքական ռեժիմների համար օգտագործում են դիխոտոմիկ բաժանումը: Սակայն շատ դեպքերում դիխոտիկ բաժանումը ճանաչողական ռեդուկցիոնիզմի հետևանք է և հաշվի չի առնում քաղաքական ռեժիմների բազմազանությունն ու միջանկյալ դեպքերը: Որոնք քանակապես ավելի շատ են քան քաղաքական ռեժիմների բացարձակ տիպերը:
- Գրականության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժողովրդավարական անցումը բացատրող կան բազում, որոշ դեպքերում իրարամերժ մոտեցումներ: Որպես այդպիսին հնարավոր չէ առանձնացնել գործոն կամ գործոններ, որոնք ընդհանրական են այդ մոտեցումներում:
- Ժողովրդավարացման բազմազան մոտեցումներում, տարբեր է նաև վերաբերմունքը ընտրությունների դերի և ընտրական ինստիտուտի

հանդեպ, ռեժիմների անցման ապահովման համատեքստում: Ընտրություններին զգալի դեր և տեղ են հատկացնում ժողովրդավարացման քաղաքական-ակտորային տեսությունները:

- Քաղաքական-ակտորային տեսությունները հետսովետական երկրների ժողովրդավարացման հարցում առանձնացնում են ընտրական ինստիտուտի դերը: Կարևորվում է ժողովրդավարացման կայացման համար հիմնադիր ընտրությունների որակն ու ընտրական համակարգը, որով կազմակերպվում են այդ ընտրությունները:
- Հետսովետական անցումային ռեժիմներից շատերին բնորոշ է էլեկտորալ ժողովրդավարություններ լինելը: Նույնիսկ այդ պայմաններում ընտրությունների որակը անցումային ռեժիմներին ոչ միշտ է բավարարում էլեկտորալ ժողովրդավարությունների պահանջներին:
- Հետսովետական անցումային ռեժիմներում ընտրությունները, դրանց շուրջ ծավալվող գործընթացները ժողովրդավարացման համար հանդիսանում են կարևոր աղբյուր:
- Գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետսովետական երկրների ընտրական համակարգերի մասին կա այն պատկերացումը, որ դրանք առանձնանում են ցածր ինկլյուզիվությամբ, բարձր ֆրագմենտացվածությամբ ու անկայունությամբ, իսկ գործընթացներում ցածր մասնակցությամբ:
- Բացի դրանից կա այն ընկալումը, որ ընտրական համակարգի ազդեցութունը կուսակցական համակարգի վրա հետսովետական երկրներում առանձնանում է ընդհանուր պատկերից: Ըստ դրա խառը ընտրական համակարգը հանգեցնում է առավել ֆրագմենտացված կուսակցական համակարգի քան համամասնական համակարգը:

**Էմպիրիկ հետազոտությունների առանձին երկրների մասով՝**

- Հայաստանի ընտրական համակարգը շարժվել է աստիճանաբար ընտրատարածքի մեծացման և համամասնական համակարգի անցման դինամիկայով:
- Սկզբնական շրջանում Հայաստանում համամասնական բաղադրիչի ընդլայնման ազդեցությունը կուսակցական համակարգի և խորհրդարանի վրա առավել զգալի էր: Համեմատական կարգով կարելի է ասել, որ Հայաստանի ընտրական համակարգը հարաբերականորեն պակաս ինկլյուզիվ և պակաս ֆրագմենտացված է: Խորհրդարանում հիմնականում առկա է մշտական մեծամասնություն և մանդատների կենտրոնացվածություն:
- Վրաստանի ընտրական համակարգն ուսումնասիրված երկրների մեջ ամենաանկայունն է: Իր զարգացման ընթացքում այն ենթակա է եղել բազմաթիվ փոփոխությունների ու վայրիվերումների:
